

ՅՈՒՍՈՒՖ ԻՂՐԻՍԻ «ՃԱՆԱՊԱՐՅՈՐԴՈՒԹՅՈՒՆ» ՊԱՏՄԱՎԱԾՔ

Ա. Վ. ՊԱՄՊԱՐՅԱՆ

XX դ. եգիպտական ականավոր գրող Յուսուֆ Իղրիսի ստեղծագործություններում 60-ական թվականներին վաղ շրջանի լավատեսական ոգու փոխարեն աստիճանաբար տիրապետող են դառնում հոռետեսական միտումները, խիստ պակասում, եթե չասենք, չքանում է նախկին հավատը կյանքի և մարդու նկատմամբ: Սկզբնական շրջանի ստեղծագործություններում գերիշխող սկզբունքները (բողոք բռնության դեմ, անհատի ազատություն, սոցիալական հավասարություն) կորցնում են իրենց հումանիստական հնչողությունը: Իր պատմվածքներում նա քննում է մարդու էությունը, թափանցում նրա հոգու խորքերը, աշխատում է ըմբռնել ենթագիտակցության դրսևորումները և արդյունքում, հրաժարվելով բարոյականության ընդունված չափանիշներից, ընդգծում է կենսաբանական բնագիտական առաջնային լինելը:

Այս տեսակետից հատկանշանական է 70-ական թվականների սկզբին հրատարակված «Ցանկասիրության տուն» («Բեյթ մին լահմ», Կահիրե, 1971 թ.) պատմվածքների ժողովածուն, որտեղ հեղինակը, հրաժարվելով կերպարների մարմնավորման ռեալիստական միջոցներից, աշխատում էր ստեղծել ընդհանրացված, վերացական խորհրդանիշ-կերպարներ: Ըստ քննադատների՝ այս կերպարները այնքան բազմանշանակ էին, որ գուշակել գրեթե անհնարին էր: Յ. Իղրիսը չդադարող եռանդով փնտրում էր նոր արտահայտչական միջոցներ, որոնք համապատասխան լինեին ընթացող քաղաքական-հասարակական կյանքի նկատմամբ արագորեն փոփոխվող իր պատկերացումներին և ընկալումներին:

«Ցանկասիրության տուն» ժողովածուի ընդհանուր ոգին ու տրամադրությունը լավագույնս ի հայտ է գալիս իբրև մենախոսություն հնչող «Մանապարհորդություն» պատմվածքում: Այն սկսվում է տղամարդու նկատմամբ սիրո բացատրությամբ, որից ոչ մի կերպ չի հասկացվում, թե ով է հեղինակի կողմից խոսողը՝ կի՞ն, թե՞ տղամարդ: Այդ պատճառով ընթերցողը ավելի հակված է կարծել, որ պարզապես մի կին սեր է խոստովանում իր սիրեցյալին: Սակայն մենախոսության ընթացքում պարզվում է, որ դա որդու խոսքերն են ուղղված հորը: Որդին պատմում է հորը մի գաղտնի ճանապարհորդության մասին, որ պետք է կատարեն միասին: Չգուշությամբ հազցնելով հորը՝ հասցնում է նրան մինչև վերելակ, ապա նստեցնում մեքենան: Այսպես հայր և որդի սկսում են իրենց գաղտնի ճանապարհորդությունը: Որդու համար հոր ներկայությունը մեքենայում շատ հաճելի է: Բազմիցս անդրադառնալով իր մանկությանը՝ որդին արտահայտում է իր զգացմունքները հոր նկատմամբ: Նա քնքշանքով նկարագրում է հորը, նրա հագուստը, սանրվածքը, ինչպես մի կին, որը կխոսեր իր սիրեցյալի մասին: Բայց տարօրինակն այն է, որ ճանապարհին տարբեր առիթներով հանդիպողները, զարմանք և տարակուսանք արտահայտող հայացքով զննելով նրանց, բողոքում են տհաճ հոտից և մատնացույց անելով հորը, գոռում են՝ «դիակ», և փախչում: Սակայն որդին, գտնվելով իր երջանկության գագաթնակետին, ոչ մի հոտ չի զգում: Աստիճանաբար գարշահոտը հասնում է նաև որդուն, բայց նա, ուշադրություն չդարձնելով դրան, շարունակում է իր ճանապարհն անորոշ ուղղությամբ: Ի վերջո գարշահոտն այնքան է ուժեղանում, որ

որդին, այլևս անկարող լինելով շարունակել ճանապարհը, ստիպված լքում է ավտոմեքենան ու հորը և միայնակ շարունակում իր ճանապարհորդությունը:

Պատմվածքի հիմնական հերոսին՝ որդուն, կարելի է բնութագրել որպես անկայուն անբավարար համակարգ ունեցող մի հիվանդի, որը պատմում է իր երազը հոգեբույժին: Նրա երազում կա երկու հիմնական հոգեվերլուծական շրջան՝ գոյության շրջան, որտեղ կարելի է նկատել որոշ նորմալ գծեր, և սեքսուալ շրջան, որը ըստ էության խաթարված ու աննորմալ է: Դրա հաստատումն է այն փաստը, որ ամբողջ պատմվածքի ընթացքում չի նշվում ոչ մի կնոջ անուն մայր, քույր, սիրելի կին և այլն: Այցելում, չակնարկելով անգամ մոր կամ քույրերի գոյության մասին, հիշատակում է միայն իր հորը և եղբայրներին: Այստեղ նկարագրված է սեռական խանգարում ունեցող մի հիվանդ տղա, որը սեր է խոստովանում իր հորը: Հայրը մահացած է և, հնարավոր է, շատ երկար ժամանակ, սակայն որդին անտեղյակ է դրան: Ինչ վերաբերում է ավտոմեքենային, ապա այն այստեղ հանդես է գալիս որպես անկողնու խորհրդանիշ:

Մենախոսության ընթացքում որդին հիշում է իր մանկությունը, թե ինչպիսի գերագույն հաճույք էր իր համար հոր ձեռքերին քնելը: Սա կարելի է դիտարկել փոքր երեխայի նորմալ էմոցիոնալ վիճակ, երբ երեխան զգում է հոր սերն իր հանդեպ: Բնական է, նման դեպքում նա զարգանում է բնականոն: Սակայն եթե հայրը շատ խիստ և կոպիտ անձնավորություն է, ապա երեխայի մոտ ի հայտ է գալիս անբավարար համակարգի որոշակի խանգարում, և մեծանալով նա կփորձի գտնել չտացած հայրական սերը մեկ այլ տղամարդու մեջ:

Պատմվածքից կարելի է հասկանալ, որ հայրը եղել է իշխող, կոպիտ մի էակ: Ինչպես նշում է որդին, հայրը միակ մարդն էր աշխարհում, որից նա վախենում էր: Ծատ հաճախ նրանց միջև վեճեր էին տեղի ունենում, և հայրը ստիպում էր որդուն հրաժարվել իր կարծիքներից և ունենալ մեկ ընդհանուր, հոր կողմից թելադրված կարծիք: Ինչպես ասում է որդին, նա երբեք չէր ծխում հոր մոտ, և սա նույնպես կարևոր հանգամանք է հոգեբանական վերլուծության ժամանակ: Որդու մեջ ի հայտ են գալիս միմյանց հակասող երկու զգացմունք: Նա միաժամանակ և սիրում, և ատում է հորը: Իրար հակասող այս երկու զգացմունքները հոգեբանության խաթարման բնորոշ գծերից են:

Ինչպես ասացինք, հորը պատկերներով ավտոմեքենայում (անկողնում) որդին գտնվում է երջանկության գագաթնակետին, քանզի այստեղ նրանց միջև եղած բոլոր հակասությունները և անհամաձայնությունները անհետանում են, նրանք այժմ գալիս են մեկ ընդհանուր եզրակացության, ունեն մեկ ընդհանուր կարծիք: Մեքենան կարծես մի կղզի լինի, որտեղ ապրում են որդին և հայրը: Նրանց շրջապատող մարդիկ հրեշներ են թվում որդուն, քանի որ քննադատում և սխալ են համարում այդ «հարաբերությունները»՝ համարելով դրանք հիվանդագին և հասարակության մեջ ընդունված կանոններին հակառակ: Օրինակ, պատմվածքում ավտոմեքենան կանգնեցնող ոստիկանը հանդես է գալիս որպես հասարակական կարգ ու կանոնի խորհրդանիշ: Նա հսկում է կարգը և կասկածամիտ է: Նրան գրեթե հաջողվում է բացահայտել ճշմարտությունը, սակայն որդուն հաջողվում է համոզել նրան, որ ամեն ինչ տեղի է ունենում կարգուկանոնի սահմաններում (ոստիկանի կանոնակարգված վիճակը հակադրվում է հոր և որդու չկանոնակարգված վիճակին):

Սակայն պատմվածքի ամբողջ ընթացքում որդին վախենում է ինչ-որ բանից, իսկ վերջում նրան պատում է սարսափը ապագայի հանդեպ, և նա փախչում է՝ թողնելով մահացած հորը: Փախուստի ժամանակ ևս նրան համակում են իրար հակասող զգացմունքներ՝ ցավը և միաժամանակ հանգստությունը: Որդին այժմ ազատ է, նա հիմա հանգիստ կարող է վայելել իրեն տրված ազատությունը: «Երջանիկ եմ նրանով, որ ես, թեկուզ ոտքով, բայց քայլում եմ և շնչում մաքուր օդը, որի մեջ չի զգացվում այդ անիծյալ, թանկագին հոտը... քո հոտը»: Որդին բավականին ուշ է գիտակցում, որ նոր կյանք սկսելու համար պետք է ա-

վարտվի հոր կյանքը՝ այսպիսի ելքը որքան ցավալի, այնքան էլ անխուսափելի էր, և հուղարկավորելով հորը, որդին վերջնականապես ազատվում է նրա իշխանությունից:

Այս պատմվածքը իր հերոսի հոգեբանական վիճակի դրսևորումներով հիշեցնում է Էմիլի Դիկինսոնի «Սերը մոր նկատմամբ» պատմվածքը: Երկու պատմվածքներում էլ առկա է անպատասխան սիրո զգացումը: Երեւալի մոտ սիրո զգացումը սկսում է ձևավորվել դեռ մանուկ հասակում: Երեխայի համար առաջին սերը դա սերն է իր ծնողի նկատմամբ: Եվ ինչպես տեսնում ենք, այս պատմվածքում այդ սիրո բացակայության պատճառով առաջ են գալիս սեռական խանգարումներ:

Հոր և որդու կերպարները պատմվածքում վեր են ածվել ընդհանրական խորհրդանիշների, որոնց կարելի է տալ բազմաթիվ մեկնաբանություններ: Ըստ Վ. Կիրպիչենկոյի՝ Տարուկ աբդ ալ-Քադերը հոր կերպարը մեկնաբանում է այսպես. «Ամենը, ինչ մարդը սիրում է և ատում կյանքում: Այդ անցյալի իշխանությունն է ներկայի նկատմամբ, մոայլ իրականության մահացու կառչումը, ձգտումը ազատության և ձերբազատման, որոնց համար պետք է վճարել թանկ գնով»: Ղալի Օուքրին տեսնում է այդ պատմվածքում «թաքնված ցանկություն՝ արմատական փոփոխությունների»: Ինքը՝ Իդրիսը, իր փնտրտուքների մեջ տեսնում է անհատի հասարակական կյանքում եղած կոնֆլիկտները: Վ. Կիրպիչենկոն գտնում է, որ այդ և մյան պատմվածքները ոչ թե կյանքն ու նրա կապն են արտացոլում իրականության մեջ, այլ ունեն քաղաքական ենթատեքստ՝ արտահայտում են ընդհանուր բողոքի, դատության զգացում, դեպի լավը փոփոխությունների անորոշ սպասում, դիմում մարդկային խղճին: Այս զգացումները հատկապես սրվել էին 1967 թ. հունիսի դեպքերից հետո, և ինչպես լրագրող Սաֆինազ Քազեմն է արտահայտվել. «Այդ պատմվածքներում տեսնում ենք հունիսի 5-ի պատերազմից հետո մեր սեփական մարմնականի բզկտված ծվենները և արտացոլումը կործանման»¹:

«Ծանապարհորդություն» պատմվածքը Եգիպտոսում 70-ական թվականներին ստեղծված քաղաքական-հասարակական իրավիճակի խորը արտացոլումն է: Այս պատմվածքում Յ. Իդրիսը առանձնացնում է հորը և որդուն որպես տարբեր հասարակարգերին և ժամանակաշրջաններին պատկանող ներկայացուցիչներ: Այսպես, եթե որդին պատկանում է ավտոմոբեմայի և ազատատենչ սերնդին, ապա հորը նա դասում է գնացքի և ստրկատիրության սերնդին: Միաժամանակ լինելով բժիշկ և հոգեբան՝ Իդրիսը հոգեբանական վերլուծության միջոցով կարողանում է վառ կերպով պատկերել իր հերոսի հոգեկան աշխարհը՝ տվյալանքները հորը կորցնելու, նրա նկատմամբ ունեցած հիվանդագին սիրո և այդ զգացումներից ձերբազատվելու պրոցեսը:

Ըստ այլ հեղինակների՝ քննադատության հիմնական թիրախը Գամալ աբդ էլ-Նասերն է, որը, չնայած պատերազմը տանուլ տալուն, շարունակեց մնալ Եգիպտոսի նախագահ²: Պատմվածքում Նասերը հանդես է գալիս հոր կերպարով, դա մի ամենակարող իշխանավոր է, որն ունի լիակատար իշխանություն իր որդու վրա: Ընդված տղայի կերպարը հավաքական է. դա Եգիպտոսն է կամ Եգիպտոսի ժողովուրդը: Պատմվածքի հիմնական գաղափարն այն է, որ Նասերը մահ և կործանում է բերում իր ժողովրդին (գարշահորը): Միաժամանակ նա կրում է կարմիր փողկապ, որը մատնանշում է իր սերտ կապը կոմունիստական Ռուսաստանի հետ³:

¹ В. Н. Кирпиченко. Юсуф Идрис, М., 1980, с. 191.

² Նույն տեղում, էջ 191-192:

³ Նասերը մահացավ 1970 թ. սեպտեմբերին:

⁴ St' u Dalya Cohen. "The Journey" by Yusuf Idris: Psycho-analysis and interpretation, Journal of Arabic Literature, E. J. Brill, Leiden, Vol. XV- 1984, էջ 137:

Հայտնի է, որ Յուսուֆ Իդրիսը սկզբում, լինելով Նասերի կողմնակիցներից, շուտով շատերի նման հիասթափվել է և դարձել նրա ընդդիմախոսը: Նասերի հետ Իդրիսի ընդհարումը հասավ իր գագաթնակետին 1954 թ., երբ պարզ դարձավ, որ հեղափոխությունը եզիպտական ժողովրդին չտվեց երկար սպասված «լուսավոր ապագան»: Իդրիսը ձերբակալվեց և բանտարկվեց: Բանտարկության ընթացքում նա ընդունեց կոմունիստական կուսակցության գաղափարախոսությունը, սակայն հետագայում հրաժարվեց իր հայցքներից: «Ծանապարհորդություն» պատմվածքում բացի քաղաքական ենթատեքստից, որտեղ հիմնական միտքը Գամալ աբդ էլ-Նասերի վարած քաղաքականության անօգուտ և կործանարար լինելու գաղափարն է⁵, տեղ է գտել նաև թույլ, սակայն այնուամենայնիվ մի դրսևորում, որը կապվում է մահմեդական աշխարհի սուրբ գրքի՝ Ղուրանի մեջ կարևոր տեղ զբաղեցնող Ահեղ Դատաստանի Օրվա մեկնության հետ:

«Ծանապարհորդություն» պատմվածքին արաբական շունչ է հաղորդում Աբդալլահ անունը. դա դոնապանն է, որն օգնում է տղային հորը մինչև մեքենա հասցնել: Այդ անունը միակ անունն է, որ մենք հանդիպում ենք պատմվածքում: Աբդալլահ նշանակում է «աստծո ծառա»: Հարց է առաջանում, թե ինչու է Իդրիսը բոլոր անուններից հատկապես ընտրել կրոնական նշանակություն ունեցող մի անուն: Միգուցե այդպիսով Իդրիսը ցանկանում է պատմվածքը ինչ-որ ձևով կապել Ղուրանի հետ:

Ղուրանում Ահեղ Դատաստանի Օրը կարևոր դիրք է զբաղեցնում: Այդ օրը բոլոր մահացածները վերակենդանանում են և դատի բերվում Աստծո առաջ: Անմեղները պարգևատրվում են, իսկ մեղավորները՝ պատժվում: Աստծո ծառաները՝ հրեշտակները, ներկա են գտնվում դատին և օգնում են նրան դատավարության ժամանակ:

Իդրիսի պատմվածքում հայրը, որն իրականում մահացած է, վերակենդանանում է: Նրան հազցնում են, դուրս հանում իր հանգստի տեղից և տանում ճանապարհորդության: Ծանապարհորդությունն այստեղ դառն է: Ծանապարհորդության վերջում հայրը մեղավոր է ճանաչվում. մնում է մեքենայում լքված:

Ղուրանում Ահեղ Դատաստանի Օրվա մասին խոսելիս նկարագրվում է, որ երբ գա այդ օրը, ամեն ոք կգա իր վարորդի և վկայի հետ⁶: Պատմվածքում որդին հանդես է գալիս որպես հոր վարորդը, իսկ ամբողջ ճանապարհին նրանց հանդիպում են վկաներ, որոնք մեղադրանքով են հանդես գալիս հոր հանդեպ (գարշահոտ):

Իդրիսի հակասություններով լի ստեղծագործության դիպուկ բնորոշումը տալիս է Վ. Կիրպիչենկոն իր «Յուսուֆ Իդրիս» գրքում. «Իդրիսի հակասական ստեղծագործությունը կարելի է անվանել եզիպտական ազգային ազատագրական հեղափոխության իսկական հայելին, որի ժողովրդական իդեալները չդիմացան կապիտալիզմի կոպիտ ճնշմանը»⁷:

Այսպիսով, «Ծանապարհորդություն» պատմվածքը կարելի է դիտարկել չորս հիմնական տեսանկյունից. անհատական, հոգեբանական, հասարակաքաղաքական և կրոնական, որոնք վարպետորեն համակցված են իրար հետ. Տաղանդաշատ հեղինակը ոչ միայն կարողանում է հետագոտել մարդու վարքի փոփոխման դրդապատճառները, այլև ցուցաբերում է հասարակությունը և նրա փոփոխվող արժեքները հասկանալու և գնահատելու ունակություն, չդադարելով փնտրել ստեղծված իրավիճակից դուրս գալու նոր ուղիներ:

⁵ St'u И. П. Примаков, Е. М. Беляев, Египет: Время президента Насера, М., 1981:

⁶ St'u "The meaning of glorious Koran, an explanatory translation by Mohammed Marmaduke Pickthall".

⁷ В. Н. Кирпиченко, ԳՉՎ. աշխ., էջ 204:

С. В. ГАСПАРЯН - Рассказ Юсуфа Идриса "Путешествие". - Объектом исследования данной работы является один из самых интересных периодов современной египетской литературы (с начала 50-х до середины 70-х гг.), когда египетское общество переживало мучительные процессы становления общественно-политического сознания и экономические трансформации, ведущие к формированию нового менталитета. Рассматриваемое произведение одного из ярчайших литературных деятелей того времени — писателя-прозаика Юсуфа Идриса — наиболее отчетливо отражает эти процессы. В рассказах Идриса исследуются тайны человеческой души и подсознания. В итоге писатель полностью отказывается от нравственных критериев и провозглашает первостепенность природных инстинктов, приоритет плоти над духом.

Прибегая к психоаналитическим методам, Идрис не только прослеживает мотивы трансформации поведенческой модели человека, но и обобщает эту осколочную информацию, связывает ее с общественными процессами, с ценностными изменениями в новом социуме.